

թեանց զինեցան ցարդ եւս. Ալլահ եէկ կանչելով ընդ զիշերս անցանիմք:

Ձ.— Լեւի ոմն հրէայ ի դուռն վէզիրին պազըրկեանպաշի գոլով, որոյ ոչ կարողացեալ ի բաւականութիւն հատուցանել իւրաքանչիւրոց, յորոց առեալ էր զպէսպէս ինչս: Վասն որոյ յայտնեաց պարտատեարցն զխորհուրդն եւ եբաց զգիրս պարտուցն լինիլ միանգամայն քսակս երեք հարիւր եւ զիւր առնելիքն ի վէզիրէն՝ հարիւր քսակ: Եւ ասէ՝ Մի՛ գրէք զիս մուֆլիս, զի առից զհարիւր քսակն եւ տացից ամենեցունցդ ըստ իւրաքանչիւրոց պարտուց իմոց, հազար զուռուշին՝ երեք հարիւր երեսուն երեք զուռուշ, եւ տաց ձեզ զարիծ ամաւ միով լուել, մինչեւ զամենեցունցդ վճարեցից զպարտս ըստ այլ իմն յուսոյ իմոյ: Եւ ամենեքեան ի մի վայր հաւաքեալ, ուրոց երեւելիքն յամենայն ազգաց ընկալան զբանն: Եւ էսո՞ւ բողոքիւ ի վէզիրէն զհարիւր քսակն եւ հատոյց՝ որպէս խոստացաւ նոցա: Եւ ամենեքեան միտեալ ի նոյն դաշինս ուխտադրացն երեւելեաց կամայ յակամայ՝ յերիցն զմին բաժինն առնելով:

Է.— Թէպէտ եւ խարաճն եւ աւարիչն դադարեցաւ, այլ քիւրէկճոյ պաշաղն առաւելաւ, խոցոտելով զժողովուրդն բրտաբարոյքն, որպէս կանխաւ գրեցի, զտաճար Տեառն պատճառելով եւ ողորմիս հանել եւ տուն որդւոյ Սուտճուն, որպէս ոմն բազմաց Մահտեսի կոչեցեալ Պըլըսլի Պալի՝ այր երկիւղած, որ առ ի յուզումն նոցա ասէր. Ահա՛ հինգ զուռուշ զուռամաս որ մինչեւ ցարդ տայի՝ որպէս ի գիրս տեսանի, առէ՛ք եւ հրաժարեցէք յինէն: Այլ նոր խօճայքն հայհոյելով ասեն. Տասն զուռուշ գրեցաք զքեզ: Իսկ յետ կռուոյ Տաճիկք, որ խանութիւցք են, Ատէմէ՛ր վագթի իքի էյլէն, ասելով՝ երբեմն ի լուեցուցանելն, երթայ Պըլըսլին եւ առնէ թէլլի պուրուլթի մի թէ Հու-